Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Մ. Մակիչյան

Հաստատված է համալսարանի
գիտական խորհրդի
«19 » հունիսի 2024թ. որոշմամբ
(արձ. № 4)

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔՈԼԵՋԻ
(ՄՄԿԾ ստորաբաժանում)
ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔՈԼԵՋԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ներածություն

Միջազգայնացումը միջին մասնագիտական ուսումնական հաստատության համաշխարհային մակարդակի կարգավիճակ ձեռք բերելու և պահպանելու հիմնական բաղադրիչներից է: Միջին մասնագիտական կրթության միջազգայնացումը բնորոշվում է ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության մակարդակով, ուսումնական պլանների և ծրագրերի միջազգայնացման գործընթացներով: Այս առումով, այն միտված է ներդնելու միջազգային և միջմշակութային արժեքները կրթական, հետազոտական և այլ բաղադրիչներում: Ներկայումս միջազգայնացման հիմնական խնդիրներ սահմանվում են կրթության որակի բարելավումը, ուսանողներին գլոբալացող աշխարհում ապրելու պատրաստելը, օտարերկրյա ուսանողների թվի ավելացումը, միջազգային հեղինակության բարձրացումը, ինչպես նաև (գիտա)հետազոտական գործունեության որակի զարգացումը:

Ներկա իրավիճակ

Քոլեջի միջազգային համագործակցության հիմնական ձևերն են.

- Օտարերկրյա քոլեջների և այլ կրթական հաստատությունների հետ կապերի ստեղծումը,
- Համատեղ ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- Միջազգային դրամաշնորհային միցոյթներին մասնակցումը,
- Միջազգային փորձագետներին՝ քոլեջի գործունեության բոլոր հայեցակերպերի գնահատման մեջ ընդգրկումը,
- Օտարերկրյա ուսանողների ընդգրկումն ուսումնական գործընթացում
- Օտար լեզուների որակի բարձրացումը՝ այդ թվում լրացուցիչ միջազգային նախաձեռնությունների օգնությամբ,
- Կրկնակի դիպլոմով ծրագրերի իրագործումը,
- Էրազմուս+ կարողությունների ծրագրերի մեջ ընդգրկումը,
- Շարժունության ծրագրերի որոնումը և դրանց մեջ Քոլեջի ուսանողների և դասավանդողների ընդգրկումը:
- Դասավանդողների և ուսանողների միջազգային գիտահետազոտական գործունեության խրախուսումը:

Համագործակցություն միջազգային պայմանագրերի ներքո

Քոլեջը շարունակում է գործել միջազգային պայմանագրերի ներքո, որոնք ձեռք են բերվել Հյուսիսային համալսարանի կողմից և նպաստում են Քոլեջի միջազգային գործունեության հիմնական բոլոր ձևերի զարգացմանը: Այս պահի դրությամբ Համալսարանն ունի 15 էրազմուս+ համագործակցության պայմանագիր հետևյալ երկրների հետ, որոնց ներքո միջազգային անձնակազմի շարժունությանը մասնակցում են նաև քոլեջի դասավանդողները:

1. Իսպանիա
- Գրանադայի համալսարան, Գրանադա
- Սևիլյայի համալսարան, Սևիլյա
- Կաստիլյա լա Մանչայի համալսարան, Ռեալ
- Բարսելոնայի համալսարան, Բարսելոնա
- Սալամանկայի համալսարան, Սալամանկա

2. Իտալիա
- Սապիենցայի համալսարան, Հռոմ

3. Լեհաստան
- Շեցինի համալսարան, Շեցին
- Ժեշովի համալսարան, Ժեշով
- Զելյոնա Գուրայի համալսարան, Զելյոնա Գուրա
- Կազիմեժ Վիելկի համալսարան, Բիդգոշչ
- Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարան, Բիալիստոկ

4. Ռումինիա
- Սիբիուի Լուչիան Բլագա համալսարան, Սիբիու
- Բուխարեստի տնտեսագիտական համալսարան, Բուխարեստ
- Բրաշովի Տրանսիլվանիայի համալսարան,Բրաշով

5. Բուլղարիա
- Վառնայի կառավարման համալսարան

Քոլեջը նաև ունի առանձին պայմանգիր Ֆինլանդիայի ESEDU քոլեջի հետ, որի հետ պատրաստել է «Քույրական գործ» կրկնակի դիպլոմով ծրագիրը:

Քոլեջի ուսանողների և դասավանդողների օտար լեզուների կարողությունների զարգացում

Քոլեջի միջազգայնացման ներուժի զարգացման նպատակով 2022–2023թթ. իրականացվել է երկու ծրագիր Ամերիկյան կորպուսի ֆինանսական աջակցությամբ՝ վիրտուալ ձևաչափով անգլերեն դասավանդելու նպատակով, որի ներքո ներքին շահառուները զարգացրել են անգլերենի խոսակցական կարողությունները: Քոլեջում ներդրված է «Իսպաներեն» լրացուցիչ դասընթաց ուսանողների և դասավանդողների համար:

Ուսանողների միջազգային շարժունություն

Ի տարբերություն բարձրագույն կրթական հաստատությունների ուսանողների՝ ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ընդրգրկված չեն Էրազմուս+ միջազգային շարժունության ծրագրերում, որը բացասաբար է ազդում Քոլեջի շարժունության ընդլայնման վրա: Այնուամենայնիվ, կապեր են հաստատվում միջազգային հիմնադրամների, արտասահմանյան քոլեջների հետ՝ այդ հնարավորությունը քոլեջի ուսանողների և դասախոսների համար ընձեռելու նպատակով:

Օտարերկրյա ուսանողների ներգրավում

Օտարեկրյա ուսանողների ներգրավումը Քոլեջի ռազմավարական խնդիրներից մեկն է և դրա լուծման համար ներգրավել է անհրաժեշտ մանկավարժական կազմ, ապահովելու նրանց մասնակցությունը վերապատրաստումներին, գիտաժողովներին, այլ նախաձեռնություններին, որոնք նպաստում են նրանց դասավանդման և հետազոտական կարողությունների զարգացմանը: Օտարերկրյա ուսանողների թիվն ավելացնելու համար Քոլեջը մշակել է անհրաժեշտ ընթացակարգեր, այդ թվում պայմանագրեր, այդ գործունեությունը ՀՀ օրենսդրության և Համալսարանի նորմատիվ–իրավական փաստաթղթերի ներքո իրագործելու համար: Օտարերկրյա ուսանողների ընդգրկման մեխանիզմների բարելավման նպատակով Համալսարանի արտաքին կապերի բաժինն իրականացնում է հանդիպումներ առցանց և առերես հարթակներում ՀՀ այլ քոլեջների, արտասահմանյան գործընկերների հետ՝ այդ գործընթացի որակի բարձրացման նպատակով: Օտարալեզու տեղեկատվության շրջանառում արտաքին շահակիցների համար Համալսարանի արտաքին կապերի բաժինը համակարգում է Քոլեջի մասին օտարալեզու նյութերի պատրաստմանը և տարածմանը Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ միասին: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

- Հայերեն նյութերի թարգմանություն և տարածում Համալսարանի վեբ–կայքում և սոցիալական հարթակներում,
- Տեղեկատվական նյութերի պատրաստում օտար լեզուներով,
- Օտարալեզու նյութերի պատրաստում օտարերկրյա դիմորդների համար:

1. SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Միջազգային պայմանագրերի և հուշագրերի կայուն աճ 2. 5 երկրների օտարերկրյա համալսարանների հետ Էրազմուս+ համագործակցության հուշագրեր, ընդհանուր առմամբ ավելի քան 15 պայմանագրեր 3. Քոլեջի դասավանդողների վերապատրաստում Էրազմուս+ անձնակազմի շարժունության ծրագրերում/եթե դասավանդում են նաև համալսարանի բարձրագույն կրթական ծրագրերում 4. Օտարերկրյա ուսանողների թվի ավելացում 5. Կրկնակի դիպլոմով ծրագրի առկայություն	1. Առայժմ չկան ուսանողների միջազգային շարժունության ծրագրեր 2. Քոլեջը ճանաչելի չէ միջազգային հարթակներում 3. Քոլեջի բոլոր դասավանդողներն են ակտիվ դիմում արտաքին շահակիցների կողմից հայտարարվող անհատական միջազգային ծրագրերի 4. Դասախոսական կազմի օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակ 5. Օտարերկրյա ուսանողները կազմում են Քոլեջի ուսանողների (113 ուսանող) ընդամենը 3.54% տոկոսը (չորս օտարերկրյա ուսանող):

Հնարավորություններ	Վտանգներ
1. Հնարավորություն՝ դիմելու Էրազմուս+ միջին մասնագիտական կարողությունների զարգացման ծրագրերին 2. Համալսարանի վեբ–կայքի ավելի լայն գործարկում՝ օտարալեզու տեղեկատվության տարածման նպատակով	1. Ուսանողների և դասավանդողների օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակ 2. Օտարերկրյա ուսանողների՝ Քոլեջում ուսումնառությունն ընդհատելու վտանգ՝ պայմանավորված ուսանողների սոցիալական խնդիրներով

Առաջարկներ թույլ կողմերը և վտանգները հաղթահարելու ուղղությամբ

Թույլ կողմեր

- Ստեղծել և իրականացնել ուսանողների փոխանակման ծրագրեր միջազգային գործընկերների հետ, մասնավորապես՝ գործակցելով տարածաշրջանի կամ ոլորտի առաջատար քոլեջների հետ:
- Քոլեջի ուսանողների համար ստեղծել ֆինանսական աջակցություն (կրթաթոշակներ, դրամաշնորհներ) միջազգային ծրագրերին մասնակցելու համար:
- Գովազդել առկա միջազգային ծրագրերը ուսանողների շրջանում՝ ամրապնդելով նրանց ներգրավվածությունը:
- Համալսարանի վեբ–կայքի քոլեջի հատվածում զետեղել օտար լեզուներով հաջողության պատմությունները և տեղեկատվություն համագործակցային հնարավորությունների վերաբերյալ:
- Կազմակերպել միջազգային գիտաժողովներ և համաժողովներ՝ որպես հարթակ Քոլեջի միջազգային ճանաչելիության ընդլայնման համար:
- Գործընկերություն հաստատել հայտնի միջազգային հաստատությունների հետ՝ համատեղ ծրագրերի կամ հետազոտական նախագծերի իրականացման միջոցով:
- Դասավանդողներին առաջարկել օտար լեզուների և միջազգային համագործակցության հմտությունների զարգացման վերապատրաստման ծրագրեր:
- Ներդնել խրախուսական մեխանիզմներ՝ դասախոսներին միջազգային ծրագրերին մասնակցելու համար:
- Հաստատել պարտադիր մասնակցության քաղաքականություն որոշակի միջազգային նախագծերի համար:
- Կազմակերպել անվճար կամ մասնակի ֆինանսավորմամբ օտար լեզուների դասընթացներ դասախոսների համար:
- Ներգրավել միջազգային մասնագետներ՝ լեզվական զարգացման առցանց կամ ֆիզիկական դասընթացներ անցկացնելու համար:
- Ստեղծել օտարերկրյա ուսանողների համար ուղղորդման ծառայություն, որը կօգնի հաղթահարել ուսման և բնակության հետ կապված խնդիրները:
- Նվազեցնել ուսման վարձավճարները կամ առաջարկել կրթաթոշակներ օտարերկրյա ուսանողների համար:

Վտանգներ

- Հավաքագրել օտար լեզվի մասնագետների թիմ՝ դասախոսների և ուսանողների համար վարժանքներ կազմակերպելու նպատակով:
- Մշակել միջազգային նախագծերում և ուսումնական ծրագրերում ներգրավվածության խրախուսման մեխանիզմներ:

- Ստեղծել սոցիալական աջակցության հատուկ ծրագիր՝ ներառելով ուսանողների սոցիալական և տնտեսական խնդիրների հաղթահարման մեխանիզմներ:
- Ներդնել աջակցող թիմ՝ ուղղված միջազգային ուսանողների ինտեգրմանը և առկա խնդիրների լուծմանը:
- Առաջարկել անվճար խորհրդատվական ծառայություններ՝ ինչպես ակադեմիական, այնպես էլ սոցիալական խնդիրների համար:
- Օտարերկրյա ուսանողների համար մշակել աշխատանքի և ուսումնառության համատեղման հնարավորություններ:

Սպասվող արդյունքներ

- Ուսանողների և դասախոսների ավելի ակտիվ մասնակցություն միջազգային ծրագրերում:
- Օտարերկրյա ուսանողների ներգրավվածության աճ և նրանց մասնագիտական ու սոցիալական խնդիրների նվազում:
- Քոլեջի ճանաչելիության և հեղինակության բարձրացում միջազգային հարթակներում:
- Միջազգային գործընկերությունների և համագործակցության ընդլայնում: